ԱՂՈՒԱՆԻՑ ԻՇԽԱՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ Է. ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ - Ը. ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Ալեքսան Յակոբեան

«Կովկաս եւ Բիւզանդիա» ժողովածոյի վերջին հատորում տարիներ առաջ տպագրուած աշխատանքում Ժ դարի վերջի Մովսէս Դասխուրանցու «Պատմութիւն Աղուանից»–ում (այսուհետեւ՝ ՊԱ) պահպանուած «684 թուականի պատմութիւն» երկի ուշադիր քննութեամբ յաջողուել էր պարզաբանել է դարի Աղուանից իշխանների կեանքի կարեւոր դրուագներից մէկի՝ Ջեւանշէր իշխանի սպանութեան եւ նրա եղբօրորդի Վարազ Տրդատի գահակալութեան ճշգրիտ ժամանակը՝ 680 թ. սեպտեմբեր[1]: Նոյն աշխատանքում կատարուել էին նաեւ դրան յաջորդած մի քանի տարուայ դէպքերի ժամանակագրական յստակեցումները՝ թուագրելով հիւսիսկովկասեան Հոնաց թագաւորութեան տիրակալ Ալփ Իլիթուէրի փոքր արշաւանքը Բուն Աղուանքի եւ Ուտիք նահանգի տարածք (681 թ. գարուն), Իսրայէլ եպիսկոպոսի ուղեւորութիւնը նախ Վաղարշապատ (681 թ. ամառ–աշուն), ապա՝ Հոնների Վարաչան մայրաքաղաք (681 թ. դեկտեմբեր – 682 թ. փետրուար), նրա ջանքերով քրիստոնէութիւն ընդունած Հոնաց իշխանաւորների նամակագրութիւնը Աղուանքի եւ կենտրոնական Հայաստանի աշխարհիկ ու հոգեւոր տիրակալների հետ (682-683 թթ.) եւ Հոներին փոխարինած խազարական հորդաների աւերիչ արշաւանքը Այսրկովկասի երկրներ (685 թ. օգոստոս):

Վերջին արշաւանքի մասին յայտնող ժամանակով ամենից մօտ հայկական սկզբնաղբիւրները՝ Փիլոն Տիրակացին եւ Ղեւոնդը, տեղեկացնում են, որ խազարների զոհը դարձան Հայոց, Վրաց եւ Աղուանից իշխանները[2]: Սակայն ըստ ամենայնի աւելի ճիշտ պէտք է համարել երեք դար յետոյ իր «Տիեզերական պատմութիւն»–ը շարադրած Ստեփաննոս Ասողիկի տեղեկութիւնը, ըստ որի՝ սպանուել էին միայն Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնեանը (661-685) եւ Վրաց իշխանը (անունով աղբիւրներում չարձանագրուած)[3]: Դա հաստատւում է նրանով, որ Աղուանից իշխան Վարազ Տրդատի անունը շարունակում է յայտնուել ե՛ւ Ասողիկի, ե՛ւ Մովսէս Դասխուրանցու հաւաստի եւ ստուգելի յաջորդ դրուագներում:

685 թ. խազարական արշաւանքից անմիջապէս յետոյ Վարազ Տրդատի իշխանութեան մասին առաջին վկայութիւնը ՊԱ Գ.ժբ գլխի՝ սովի մասին յիշատակութիւնն է. «Եւ եղեւ ի նմին աւուրս Վարազ Տրդատայ սով անտանելի յԱղուանից սահմանս: Վասն որոյ առասպելաբանիւր յոմանց, եթէ. «Ես՝ կորեակ, ի Շակաշէն գաւառի ծածկեալ կայի ի վայրին Կակուայ (bclr Կակուղայ)[4], եւ զանց առնէին զինեւ բազմութիւնք գնողաց եւ ոչ գտանէին զիս: Եկն ժամ բարի, որ եղբայրն իմ Սով տիրանայր, եւ ահա գտայ ես ելեալ (a երեւելի) ի սեղանն Վարազ Տրդատայ իշխանի եւ Եղիազարայ կաթողիկոսի, եւ որք կերանն զիս՝ արիւնաբերք եղեն»»: Քանի որ Եղիազար կաթողիկոսի տարիներն են 680-686 թթ.[5], եւ նրանցից առաջին երեք-չորսի մասին «684 թուականի պատմութիւն»–ից գիտենք իբրեւ բարգաւաճ տարիների,

դժուար չէ նկատել, որ սովի ծանր շրջանը վրայ է հասել 685 թ. ամռանը տեղի ունեցած խազարական արշաւանքից յետոյ (685-686):

Ղեւոնդի հաղորդած տուեալներից երեւում է, որ այդ տարուայ սովն աւելի մեծ ընդգրկում է ունեցել՝ տարածուած լինելով նաեւ կենտրոնական Հայաստանում: Ըստ պատմիչի՝ Գրիգոր Մամիկոնեանի մահուանից յետոյ (685 թ. օգոստոսի 16) իշխան է դառնում Աշոտ Բագրատունին[6], «յառաջնումն ամի իշխանութեան նորա երեւեցաւ աստղն զարմանալի տեսլեամբ վարսաւոր, զի ճաճանչ շողիցն սիւնաձեւ յիւրմէն փողփողէր զլոյսն յետոյ ինքեան, զոր անուանեալ կոչէին աստղ գիսաւոր, որ եղեւ նշանակ սովոյ եւ սրոյ եւ մեծի սասանութեան»[7]:

Վարազ Տրդատի իշխանութեան յաջորդող ժամանակահատուածի մասին ամենից մանրամասն տեղեկութիւններին հանդիպում ենք ՊԱ Գ գրքի մի քանի գլուխներում: Մասնաւորապէս, Գ.ժբ գլխի սկզբում յայտնւում է հետեւեալը. «Ընդ նուազել ի սպառ թագաւորութեանն Պարսից եւ զաւրանալ ազգին հրաւային Տաճկաց՝ սաստկանային (bclr սաստկանայր) սակս[8] հարկահանաց աշխարհի, առաւել՝ կողմանցս Արեւելից, զի իշխանն Աղուանից Վարազ Տրդատ ընդ երիս հարկէր՝ Խազրաց, Տաճկաց եւ Հոռոմոց: Իսկ խստագոյն նեղութիւն ի Հռովմայեցւոցն հասեալ նմա: Հանդիպիւր (a հանդիպիւր, զի) հանդերձ որդւովք իւրովք յարքայաքնակ քաղաքի անդ եւ (a չիք եւ) արգելեալ լինէր ի կայսերէն. եւ (bclr չիք եւ) տուեալ ի պատանդ զորդիսն, եւ ինքն իշխանն անդ խաւթացեալ (a խորթացեալ) մնայր»:

Մինչ այս տեղեկութեան ժամանակի ճշգրտմանն անցնելը նշենք, որ աղբիւրագիտական պատկերի առումով, ինչպէս ցոյց ենք տուել ժամանակին, տուեալ գլուխը յանգում է Մովսէս Դասխուրանցու օգտագործած մի գրաւոր սկզբնաղբիւրի, որն անուանել ենք «Աղուանից կաթողիկոսների գաւազանագիրք»: Նրա շարադրանքի առանցքային մասը պատմիչն արտագրել է ՊԱ եզրափակիչ գլխում (Գ.իգ)՝ հնարաւոր է՝ հէնց աղբիւրին յանգող «Անուանք հայրապետացն Աղուանից, ամք եւ գործք նոցին» վերտառութեամբ, սակայն նրա շատ կտորներ էլ անջատել է եւ դասաւորել նախորդող գլուխներում[9]: Այդ գաւազանագրքի վերականգնուող բնագիրը թողնում է Աղուանից կաթողիկոսարանում տարբեր փաստաթղթերի ու գրուածքների հետ հաւաքուած յիշատակարաններից եւ կաթողիկոսների ու նրանց ժամանակ տեղի ունեցած ինչ–ինչ անցքերի մասին ժամանակագրական նշումներից առաջացած մի հաւաքածոյի (այլուր կոչուած՝ տոհմամատեան կամ քրոնիկ) տպաւորութիւն: Նմանատիպ հաւաքածոյի ամենից յայտնի օրինակը է դարի վերջին[10] Յովհան Մամիկոնեանի ձեռքի տակ գտնուած Գլակայ վանքի վանահայրերին վերաբերող նիւթերի ժողովածոն էր, որի մասին պատմիչն իր յիշատակարանում գրում է. «Ժամանակագրութիւնս այս սկսեալ առ սրբոյն Գրիգորով Ջենոբայ Ասորւոյ, վասն որ ինչ յիւրեան տեղիսն գործեցաւ թողեալ գրով ի նոյն եկեղեցին, հաճոյ է թուեալ եւ այլոց յետոյ զնոյն պահեալ զկարգ՝ միայն որ ինչ իշխան տանս այս առնէր քաջութիւն՝ իւրաքանչիւր հայր գրեալ զիւր ժամանակին թողոյր»[11]: Աւելացնենք, որ, ի տարբերութիւն, օրինակ, Մամիկոնեան պատմիչի՝ Մովսէս Դասխուրանցին, որպէս կանոն, ոչ թէ վերաշարադրում, այլ բառացի արտագրութեամբ է տալիս իր աղբիւրների բնագիրը, եւ դա էապէս մեծացնում է նրանց՝

© National Library of Armenia

իբրեւ իրենց ժամանակաշրջանի սկզբնաղբիւրի հաւաստիութիւնը:

Տեղին նշենք նաեւ, որ հաւանաբար հէնց այս ժամանակագրական եւ փաստաթղթային նիւթեր պարունակող գրչագիրն է եղել Ժ դարի կէսերին Աղուանքի կաթողիկոսարան այցելած Անանիա Մոկացի Հայոց կաթողիկոսի ձեռքին: Վերջինս այստեղի հոգեւորականներից խնդրել էր «զՊատմութիւնն Աղուանից», նրանից այն «զրաւեալ գաղէին», սակայն գիշերային ընթերցման համար ստացած ինչ-ինչ գրչագրերից մէկում կաթողիկոսը գտել էր այն, ինչ փնտրել էր՝ «որում եւ ցանկորդն էաք տեսութեան»: Իր ընդարձակ թղթում Մոկացին վերաշարադրում է իր «գտածից» (այլեւս «Պատմութիւնն Աղուանից» չանուանելով) որոշ դրուագներ, հիմնականում՝ հետագայում Մովսէս Դասխուրանցու արտագրութեամբ մեզ հասած փաստաթղթային նիւթի բնօրինակներից, բայց նաեւ տեղիներ, որոնք զուգորդւում են ՊԱ Գ գլխի ժամանակագրական տեղեկութիւններին[12]:

Վերը բերուած ՊԱ վկայութիւնը Վարազ Տրդատի՝ Բիւզանդիա տարուելու մասին հաստատւում է նաեւ այլ աղբիւրների թէկուզ եւ ոչ ուղղակի հաղորդումներով, որոնք կապուած են Յուստինիանոս Բ կայսեր (685-695, 705-711) առաջին չորս տարիների արեւելեան ակտիւ քաղաքականութեան հետ: Ինչպէս տեղեկացնում է Ղեւոնդը, խազարների աւերիչ արշաւանքից յետոյ Յուստինիանոսը իր թագաւորութեան երկրորդ տարում (686-687) եւ Աշոտ Բագրատունի պատրիկի իշխանութեան ժամանակ (685-689) «առաքէ զաւր բազում ի վերայ աշխարհիս Հայոց»: Ըստ պատմիչի՝ բիւզանդացիները «աւերեցին զաշխարհս աւարառութեամբ եւ զբազում գեղեցկայարմար շինուածս հրձիգ արարին՝ յաւեր դարձուցանելով, եւ ինքեանք դառնային յաշխարհն իւրեանց»[13]: Ասողիկի մօտ, որի ժամանակագրական լրացուցիչ տեղեկութիւնների աղբիւրների մասին դեռեւս ոչինչ ասել չենք կարող, թէպէտ դրանց հաւաստիութիւնը աչքի է զարնում, այս արշաւանքը թուագրուած է Յուստինիանոսի երրորդ տարով[14]:

Ուսումնասիրողներն արդարացիօրէն բիւզանդացիների այս գործողութիւնների հետ են կապում Թ դարի յոյն ժամանակագիր Թէոփանէս Խոստովանողի վկայութիւնը՝ Լէոնտիոս զօրավարին Այսրկովկաս ուղարկելու մասին: Ժամանակագրութիւնը Յուստինիանոս կայսեր առաջին (685-686) եւ Աբդալմելիք ամիրապետի երրորդ (687-688) տարուայ համար յայտնում է, որ Յուստինիանոսը «Հայաստան ուղարկեց Լեոնտիոս զօրավարին, որն այնտեղի սարակինոսներին ջարդ տալով, երկիրն իրեն հպատակեցրեց, ինչպէս նաեւ՝ Իբերիան, Ալբանիան, Բուկանիան[15] եւ Մարաստանը: Նա այդ երկրները հարկատու դարձնելով, կայսեր բազում դրամ ուղարկեց: Աբդալմելիքը, իմանալով այդ մասին, գրաւեց Կերկեսիոնը եւ իրեն ենթարկեց Թէուպոլիսը[16]»:

Շարունակելով կարեւոր տեղեկութիւններ հաղորդել Հայաստանում եւ շրջակայ երկրներում ակտիւացած արաբաբիւզանդական հակամարտութեան վերաբերեալ, Ղեւոնդը եւ Ասողիկը յայտնում են Աշոտ Բագրատունի իշխանի եղերական մահուան մասին (689) Ատրպատականից Նախճաւանի կողմերը ներխուժած արաբական զօրաջոկատի դեմ ճակատամարտում[17]: Դրանից յետոյ Ասողիկը գրում է նաեւ Յուստինիանոս կայսեր՝ իր իշխանութեան չորրորդ տարում, այսինքն՝ 689 թ. Հայաստան հասնելու մասին. «Իսկ ի գալ չորրորդ ամին Յուստիանոս ինքն խաղացեալ զաւրու ծանու՝ եկն ի կողմն Առաջին[18] Հայոց, ի լեառն, որ կոչի Արարտակ, եւ յերիս բաժանեալ զզաւրս իւր՝ առաքէ ի Հայս, ի Վիրս եւ յԱղուանս»: Մեզ համար յատկապէս կարեւոր է այս վկայութեան շարունակութիւնը. «Եւ կոչեալ առ ինքն զամենայն իշխանս աշխարհացս Հայոց այսոցիկ, եւ ոչ ի կամաց, այլ ի հարկէ գնացեալ առ նա[19]»: Յաւելենք, որ կայսեր՝ Հայաստան հասնելու մասին յայտնում է նաեւ Թէոփանէսը, թէպէտ, թւում է, թէ տեղաշարժուած ժամանակագրութեամբ: Ըստ նրա՝ «Հռոմայեցիների Յուստինիանոս կայսեր 10-ամեայ թագաւորութեան երկրորդ» (686-687), բայց «արաբների առաջնորդ Աբդալմելիքի 22-ամեայ իշխանութեան չորրորդ» (688-689) տարում «կայսրը գալով Հայաստան, այնտեղ ընդունեց Լիբանանի մարդայիտներին...»[20]:

Մեզ հետաքրքրող խնդրի առումով կարեւոր են այն մանրամասները, որ շարունակում է հաղորդել Ասողիկը Հայաստանում Յուստինիանոսի կատարած գործերի մասին. «Իսկ նորա զոմանս յիշխանացն ընդ իւր առեալ, եւ զոմանց զորդիսն պատանդս խնդրեալ, ընդ որս եւ կաթողիկոսն Հայոց զՍահակ հանդերձ Ե եպիսկոպոսաւք արգելեալ առ ինքն. եւ զոմանս յիշխանացն արքունատուր պատարագաւք պատուեալ՝ կացոյց իշխանս աշխարհացն, զՆերսէհ Շիրակայ տէր, կոմս Կապոյտիրոց՝ Հայոց իշխան, եւ զՎազդատ՝ պատրիկ էքսարխոս, որ էր երկրորդ թագաւորին՝ Աղուանից իշխան, եւ ԼՌ զաւր աւգնական [թողեալ][21], եւ ինքն ի Կոստանդնուպոլիս դարձաւ»[22]:

Արդ՝ ուսումնասիրողներից որեւէ մէկի մօտ կասկած չի յարուցել, որ Յուստինիանոսի կողմից պատրիկ էքզարխոս եւ Աղուանից իշխան նշանակուած այս Վազդատ անձնաւորութիւնը դեռեւս 685 թուականից այդ պաշտօնը տնօրինող նոյն Վարազ Տրդատն է: Միաժամանակ, ակնյայտ է նմանութիւնը Հայ իշխաններին իրենց որդիների հետ պատանդ վերցնելու մասին Ասողիկի պատմածի եւ վերը բերուած Մովսէս Դասխուրանցու վկայութեան միջեւ՝ Վարազ Տրդատին եւ նրա որդիներին Կոստանդնուպոլսում պահելու վերաբերեալ: Իհարկէ, Ասողիկը Վազդատի մասին գրում է միայն Աղուանից իշխան նշանակելու կապակցութեամբ եւ ոչինչ չի յայտնում վերջինիս Կոստանդնուպոլիս տանելու մասին: Սակայն, միւս կողմից՝ ակնյայտ է նաեւ, որ ոչինչ չի խանգարում իրարով լրացնելու նրա եւ Մովսէս Դասխուրանցու այնքան միմեանց համահնչիւն հաղորդումները:

Դժուար է պատասխանել միայն այն հարցին, թէ ինչո՞ւ իր կողմից վերանշանակուած Աղուանից իշխանին կայսրն այնուամենայնիւ պատուաւոր աքսորի դատապարտեց: Ելքը գտնելու համար թերեւս անհրաժեշտ է ենթադրել, որ Յուստինիանոսը մինչեւ վերջ յաջողութեան չհասաւ իր իսկական ծրագրերում եւ ստիպուած եղաւ Այսրկովկասի երկրները ամբողջութեամբ իրեն ենթարկելու փոխարէն բաւարարուել մի քանի տասնամեակ պարբերաբար գործողութեան մէջ մտնող պայմանագրի վերահաստատումով, որի համաձայն՝ իշխանութիւնն այդ երկրների (այդպէս նաեւ՝ Կիպրոսի) վրայ արաբական խալիֆայութեան հետ կիսւում էր[23]: Դրանից յետոյ նա հեռացաւ Հայաստանից՝ իբրեւ հպատակութեան երաշխիք պատանդ պահելով բազմաթիւ իշխանների, այդ թւում նաեւ՝ իր որդիների հետ գնացած («հանդիպիւր հանդերձ որդւովք իւրովք») Վարազ Տրդատին: Բոլոր դէպքերում, մեզ հետաքրքրող ժամանակագրական ճշտումների առումով պէտք է արձանագրել, որ ըստ առկայ աղբիւրների՝ Յուստինիանո-

© National Library of Armenia

սի հետ միասին Վարազ Տրդատը եւ նրա Գագիկ ու Վարդան որդիները Կոստանդնուպոլիս մայրաքաղաքում յայտնուեցին կայսեր չորրորդ տարում՝ 689 թ.:

Ըստ Մովսէս Դասխուրանցու մօտ պահպանուած պատմութեան (Գ.ժբ)՝ Վարազ Տրդատը Կոստանդնուպոլսում մնաց հինգ տարի, որից յետոյ խորամանկութեամբ կարողացաւ վերադառնալ հայրենիք. «Եւ ի յերկարելն (bclr յերկարեալ) Վարազ Տրդատայ՝ ի միում աւուր (bcr աւուրց) եղեւ թագաւորին Հռովմայեցւոց ընտրել ակունս պատուականս, եւ կոչեցեալ (l կոչեալ) զիշխանն Աղուանից՝ ցուցանէր նմա. եւ նորա խորամանկեալ ասէ. «Ի տան իմում պատուականագոյնք գոն (a պատուականագոյն գտանին) քան զայդոսիկ, տաց զնա (r զայնս) ձերոյդ աստուածապսակեալ անձինդ, զի վայել է իսկ ձեզ»: Եւ այն ամ հինգ էր իշխանին կալն ի Հռոմս (l Հոռոմս), եւ վասն այսր իրի զերծեալ Աստուծոյ աւգնականութեամբն՝ եկն եհաս (bclr չիք եհաս) յաշխարհն իւր»: Պատմիչն անմիջապէս շարունակում է. «Եւ յայնմհետէ ետ զաշխարհս Արեւելից ի Տաճիկս եւ նոցա միայն հարկէր»: Զնայած որոշ կիսանովելային բնոյթի մանրամասներին, այս տեղեկութեան ժամանակագրութիւնը՝ 689+5= 693/694, հաստատւում է ուրիշ աղբիւրներով:

Թէոփանէս Խոստովանողը Յուստինիանոս կայսեր ութերորդ (692-693), բայց Աբդալմելիքի ամիրապետութեան տասներորդ (694-695) տարուայ համար պատմում է. «Այդ տարի Հայաստանի պատրիկ Սմբատը, իմանալով Հռոմայեցիների պարտութեան մասին, Հայաստանը արաբներին յանձնեց» (կայսրութեան դէմ արաբների յաջող գործողութիւնների մասին ժամանակագիրը հաղորդել էր նախորդ տարուայ դէպքերի կապակցութեամբ)[24]: Ղեւոնդը եւ Ասողիկը Հայաստանի՝ արաբներին ենթարկուելու մասին ոչինչ ուղղակի չեն յայտնում: Վերջինը գրում է միայն, որ Ներսէհ Կամսարականից յետոյ («եկաց ամս Դ»՝ 689-693) «ի ձեռն[բ][25] թուականին Սմբատ Բագրատունի Բիւրատեան Հայոց իշխան եղեւ՝ ամս Ի»[26]: Իսկ Ղեւոնդը, որը չգիտէ Հայոց իշխան Ներսէհ Կամսարականի մասին, պատմում է միայն մի քանի տարի անց տեղի ունեցած բիւզանդական զօրքի (արդէն Ապսիմարոս կայսեր ուղարկած, այսինքն՝ մօտաւորապէս 698-699 թթ.) եւ Սմբատի զօրաջոկատի միջեւ Պայիկ կոչուած ճահճուտ վայրում տեղի ունեցած մի ճակատամարտի մասին, որն աւարտւում է Սմբատի փախուստով, բայց նաեւ՝ Տիբերիոս Ապսիմարոսի (698-705) զօրքի վերադարձով իրենց երկիրը[27]: Բայց սա, անկասկած, վկայութիւն է այս ժամանակահատուածում արաբներին Սմբատի ենթակայութեան մասին:

Աւելացնենք, որ 693-694 թթ. Այսրկովկասի երկրների ենթակայեցումը խալիֆայութեանը հաստատւում է նաեւ արաբական աղբիւրներով, որոնց տեղեկութիւնների համաձայն՝ 692 կամ 693 թ. Փոքր Ասիայում, Սեբաստուպոլսի մօտ բիւզանդացիների կրած պարտութիւնից յետոյ Աբդ ալ-Մալիք ամիրապետը իր Մուհամմադ անունով եղբօրը նշանակեց Հայաստանի, Ատրպատականի եւ Վերին Միջագետքի (Ջազիրայի) փոխարքայ[28]: Ըստ Թէոփանէսի՝ Յուստինիանոսի առաջին կայսրութեան վերջին երկու տարում (694-695) եւ նրան յաջորդած Լէոնտիոսի օրօք (695-698) արաբները մի շարք յաջողութիւնների հասան՝ իրենց իշխանութիւնը հաստատելով Լազիկայում եւ Աֆրիկայի հիւսիսում[29]: Այսպիսով, կարելի է ամփոփել, որ Վարազ Տրդատի փախուստը Կոստանդնուպոլսից մեծ հաւանակա-

նութեամբ կապւում է Այսրկովկասի երկրների՝ կայսրութեան հետ համատեղ կառավարումից միայն արաբների հպատակութեանն անցնելու ժամանակի հետ՝ 693-694 թթ., որն, իրօք, իշխանի՝ Բիւզանդիա գնալու հինգերորդ տարին էր:

Մովսէս Դասխուրանցու ունեցած ժամանակագրական տեղեկութիւնների շարունակութեան համաձայն՝ Վարազ Տրդատի փախուստից եւ արաբներին հպատակուելուց յետոյ նրա որդիները բանտ նետուեցին, ուր մնացին (ըստ պահպանուած ձեռագրերի՝ 12 տարի) մինչեւ Յուստինիանոսին իր երկրորդ գահակալութիւնից յետոյ փոխարինած Վարդան Փիլիպիկոսի (711-713) իշխանութեան անցնելը. «Իսկ Վարազ Տրդատայ Աղուանից իշխանի որդիքն՝ Գագիկ եւ Վարդան, որք ի Յոյնս էին պատանդք, վասն խռովութեան թագաւորին կացին ի մթին տան ընդ երկրաւ (a չիք ընդ երկրաւ) զամս ԺԲ, եւ պատճառք՝ հաւր նոցա զաշխարհս Արեւելից ի Տաճիկս տալն եղեւ: Եւ ի վաղճանելն Յուստիանոսի՝ Հռոմոց թագաւորի, Վարդան Փիլիպիկոս (a Փղէպիկոս) թագաւորեաց, որ էր յազատացն Հայոց: Եւ յիշեաց զորս ի խաւարային բերդին էին արգելեալ կենդանւոյն, եւ հրամայեաց թագաւորն հանել զնոսա յանտանելի տանջանացն, որոց տեսութեան աչացն խաւար էր ծածկեալ: Ապա առ փոքր փոքր ածեալ ի լոյս՝ ետ պարգեւս թագաւորն եւ արձակեաց զնոսա (a չիք զնոսա) յաշխարհն իւրեանց՝ շնորհեալ մասն Գագկայ ի կենսատու խաչէն՝ զլոյսն տիեզերաց: Եւ նորա եկեալ՝ ետ զմեծ պարգեւն ցՄիքայէլ Աղուանից կաթողիկոս»[30]: Թերեւս այստեղ տեղին կը լինէր զուգահեռաբար նշել Թէոփանէսի այն տեղեկութիւնը, որ իշխանութիւնը գրաւելուց յետոյ Վարդան Փիլիպիկոսը կայսրութեան կենտրոնական շրջաններից (ուրեմն նաեւ՝ մայրաքաղաքից) հեռացրեց հայերին դէպի երկրի արեւելեան շրջանները՝ Մելիտինէ եւ Զորրորդ Հայք (այսինքն, փաստօրէն՝ Հայաստան)[31]:

Օգտագործելով Մովսէս Դասխուրանցու վերը բերուած տեղեկութիւնները՝ ուսումնասիրողները փաստօրէն չեն ընկալել նրանցում առկայ բաւականին յստակ ժամանակագրութիւնը: Օրինակ, հայր Ներսէս Ակինեանը պնդում է, որ Վարազ Տրդատը եղել է ոչ թէ Յուստինիանոսի, այլ Տիբերիոս Ապսիմարոս կայսեր պատուաւոր գերին, այն է՝ 694-699 թթ. հնգամեակում, Աղուանից երկիրը նրա կողմից արաբներին է ենթակայացուել 700 թ.[32], այդ պահին էլ նրա որդիները բանտ են նետուել, որտեղից ազատուել են 12 տարի անց՝ 711/712 թ.[33]: Ըստ Սուրէն Երեմեանի, Կամիլա Տրեւերի եւ Կիրիլ Թումանովի՝ Վարազ Տրդատը որդիների հետ Կոստանդնուպոլիս է տարուել Տիբերիոսի օրօք՝ 699-ին, ինքը ազատ է արձակուել իշխանութեանը վերադարձած Յուստինիանոսի կողմից 705-ին, իսկ որդիները՝ Վարդան Փիլիպիկոսի օրօք 711-ին[34]: Սակայն իրականում ուսումնասիրողների պնդումներում աղբիւրներին համապատասխանում է միայն վերջին «12 տարի» թիւը: Փոխարէնը, ինչպէս վերը նկատեցինք, Վարազ Տրդատի՝ Յուստինիանոսի կողմից Կոստանդնուպոլիս տարուելը այլ աղբիւրների կողմից հաստատուելով թուագրւում է 689-ով, իսկ փախուստը եւ արաբներին հնազանդուելը՝ նոյն հաւաստիութեամբ՝ 694 թուականով: Ճիշտ է, այս դէպքում 694-ից հաշուած մինչեւ Վարդան Փիլիպիկոսի իշխանութեան գալը կազմում է ոչ թէ 12, այլ 18 տարի (Վարդանը Յուստինիանոսին տապալեց 711-ի դեկտեմբերին[35]): Սակայն կարծում ենք, որ ճիշտ է

© National Library of Armenia

ենթադրել հէնց հետագայ գրիչներից մէկի մօտ սկզբնագրի ԺԸ թուի փոխուելը ԺԲ-ի (հայերէն ձեռագրերի ընդօրինակման ժամանակ Բ եւ Ը թուերը ամենից յաճախ շփոթուողներից են)[36]: Ըստ այդմ, կարելի է ամփոփել, որ Վարազ Տրդատի որդիների՝ Կոստանդնուպոլսի բանտում մնալու ժամանակն է 694-ից 712 թ. սկիզբը:

* * *

Աղուանից իշխանների պատմութեան մէջ նշանակալի դիպուած է Վարազ Տրդատի այրի Սպրամ իշխանուհու, կաթողիկոս Ներսէս Բակուրի եւ Մովսէս Դասխուրանցու կողմից ու մի քանի թղթերում Աղուանից իշխան կոչուող Շերոյի հակամարտութիւնը: Ըստ Մովսէս Դասխուրանցու ունեցած տեղեկութիւնների՝ Ներսէս Գարդմանացի կաթողիկոսն իր 17 ու կէս ամեայ իշխանութեան (686-704 մայիս) 14 տարին, այսինքն՝ մինչեւ 700 թուականն աթոռակալեց «ուղղափառութեամբ», իսկ մնացեալ երեքուկէս տարին՝ «ի չարափառութեանն» (Գ.է, էջ 297): Նրա ընտրութեան ժամանակ, այսինքն՝ 686 թ., Աղուանից որոշ շրջանակներ (մասնաւորապէս՝ Մեծ Իրանքի եպիսկոպոս Յովէլը) կասկածել են Ներսէսի ու նրա հովանաւոր Սպրամ իշխանուհու քաղկեդոնական հակումներին եւ «առաջի մեծախումբ ժողովոյն» պահանջել ու ստացել են «ի Ներսիսէ ձեռնարկ՝ նզովել զժողովն Քաղկեդոնի եւ զտոմարն Լեւոնի՝ նովին մատանեաւ» (Գ.գ, էջ 293): Մեզ համար նշելի է, որ 686 թուականը խազարների աւերիչ արշաւանքին յաջորդած բիւզանդական արեւելեան քաղաքականութեան ակտիւացման ժամանակն էր, երբ իրօք ենթադրելի է երիտասարդ ու անհաւասարակշիռ Յուստինիանոս կայսեր կողմից Հայաստանում եւ Աղուանքում քաղկեդոնականութեան (թերեւս նրա մոնոթելիստական տարբերակի) ընդունման պայմանը հերթական անգամ առաջ քաշելու հնարաւորութիւնը:

Ըստ Մովսէս Դասխուրանցու ունեցած ժամանակագրական տեղեկութիւնների շարունակութեան՝ 700 թ., իբրեւ թէ օգտուելով դաւանական զգօնութեամբ հռչակուած Յովէլի մահուանից, Ներսէս Բակուրը եւ Վարազ Տրդատ իշխանի կին Սպրամը, կաշառելով նրա յաջորդը լինելուն յաւակնող, եպիսկոպոսանիստի վանահայր Զաքարիային (դրանից յետոյ ձեռնադրուած Մեծ Իրանքի եպիսկոպոս), ոչնչացնում են 686 թ. ժողովի ձեռնարկը, ապա սկսում հալածել միաբնակութեան մի շարք ջատագովների եւ «աւգնութեամբ եւ այլոց նախարարաց» ամբողջութեամբ յարում քաղկեդոնականութեանը (Գ.գ, էջ 293-294): Մեզ համար կարեւոր պէտք է համարել այն, որ անկախ աղբիւրի նշած անձնական հակումներից՝ այդ իրադարձութեան տարեթիւը համընկնում է արաբական իշխանութեան դէմ Հայաստանում սկսուած քառամեայ ապստամբութեան ժամանակին, որում արձանագրուած է բիւզանդացիների սպասելի օգնութիւնը[37]: Ըստ Ղեւոնդ պատմիչի՝ Վարդանակերտի ճակատամարտի յաղթանակից յետոյ հայ ապստամբները աւետիս եւ նուէրներ ուղարկեցին Յունաց կայսերը, որն ի պատասխան դրան կիւրոպաղատի տիտղոս շնորհեց Հայոց իշխան Սմբատ Բագրատունուն[38]: Այդ մասին քիչ անց յայտնում է նաեւ ՊԱ Գ.ժզ գլուխը. «Ի ՃԽԶ-երորդ[39] թուականութեան Հայոց եկն Մահմետն երկրորդ ի Հայք, եւ աճապարեալ ընդ աշխարհն Աղուանից՝ մտանէ ի Զորա (ա Զոզա): Իսկ ապստամբեալ Հայոց՝ արգելին զՏաճիկն (cr զՏաճիկսն) ի Դունի եւ ԿԲ հազարս[39] ի Տաճկացն սպանին՝ ածեալ զաւր բազում ի Հոռոմոց: ... Եւ դարձաւ

Մահմետն ի Զորա, գայ պաշարէ զՍեւան ծովապատն բերդ ամս Գ եւ ապա առնու եւ ի սուր սուսերի արկանէ (bclr արկ), զորս գտանէ ի նմա (bclr ի նմայն եգիտ). եւ անտի անցեալ ի Հայս (bclr Հայք)՝ եհար զՀոռոմստայն (a զՀոռոմսպայն) եւ զՀայն»[40]:

Ի տարբերութիւն Մովսէս Դասխուրանցու, որն այնուհետեւ անմիջապէս միացնում է 705 թ. աշնան Նախճաւանի ու Խրամի ողբերգական դէպքերը՝ Ղեւոնդի, Շապուհ Բագրատունու, Ասողիկի եւ միւս հայկական աղբիւրների համաձայն՝ մօտաւորապէս 703 թ. հայերը յետ են կանգնում ապստամբութիւնից եւ արաբական նոր ուղարկուած զօրքերի ասպատակութիւններից խուսափելով (թերեւս նաեւ Բիւզանդիայի համեմատական պասիւութեան պարագայում), շնորհիւ Սահակ Զորափորեցու յաջող դիւանագիտական ուղեւորութեան Ասորիք (նրա նամակն արդէն ծերունազարդ կաթողիկոսի մահուանից յետոյ խառնում ընդունում է Օկբայ ոստիկանը), նորից յանձն են առնում խալիֆայութեան հպատակութիւնը. ըստ Ղեւոնդի՝ մօտ երկու տարի «ծառայեցին յայնմհետէ Իսմայելացւոցն ծառայութիւն ստրկի»[41]:

Սահակ Զորափորեցուց յետոյ կաթողիկոս է դառնում Եղիա Արճիշեցին (703–717), որին շուտով Պարտաւ են հրաւիրում՝ գահընկեց անելու երկաբնակ Ներսէս Բակուրին: ՊԱ Գ.դ գլխում ներկայացուած է այն ժողովի նամակը, որը գումարեցին «Շերոյ մեծ իշխանն Աղուանից հանդերձ իւր ազատաւքն եւ բազմութեամբ ուխտից եկեղեցւոյ»՝ նզովելով Ներսէսին ու տեղեկացնելով «ի Հայս զանցս աղետիցն»: Յաջորդ գլխում ներկայացուած է «Տիեզերակալ Աբդլայի [գլխի վերնագրում՝ «Աբդլմելք» (ա Աբդղմեղք)] ամիրմոմնւոյ՝ յԵղիայէ Հայոց եպիսկոպոսապետէ» թուղթը, ուր պահանջում էր պատժել Ներսէսին, որը «խորհուրդ արարեալ ընդ կայսերն Յունաց՝ զնա քարոզէ յաղաւթս, եւ զաշխարհս (bclr զաշխարհն) ստիպէ, զի ի հաւատ եւ ի միաբանութիւն նմա եկեսցեն» (Գ.է, էջ 295-296): Վերջապէս, Գ.զ գլխում բերուած է ամիրապետի պատասխանը, ուր ասւում է. «Զառնդ Աստուծոյ զԵղիայի զԱրմենեան ազգի ջաթղկիդ կարդացի զգիր մտերմութեան եւ ի շնորհս քեզ առաքեցի զծառայ իմ հաւատարիմ բազում զաւրաւք»: Ինչպէս պատմում է աղբիւրի յաջորդ գլուխը, 704 թ. մայիսին տեղի ունեցած Պարտաւի ժողովում[42] Շերոյ իշխանի կողմից ուժով բերուած Ներսէս Բակուրը պատասխան չի գտնում («անպատասխանի գոլով». նա շղթայւում է Սպրամի հետ միասին՝ «ոտն ընդ ոտն բաղազանեալ կապեցաւ ընդ կնոջն»), սակայն ութ օր քաղցած մնալուց յետոյ վախճանուելիս նզովում է ոչ միայն Շերոյին («զի նա եղեւ առաջնորդ չարի նորա»), այլեւ իշխանուհուն՝ «վասն հակաճառութեանն, որ ընդ նա եւ ընդ Սպրամ ի վերայ իշխանութեանն» (Գ.է, էջ 297):

Թւում է, թէ բերուած վկայութիւնները մեծ հաւանականութեամբ հնարաւորութիւն են տալիս վերականգնել պատմական իրադարձութիւնների հետեւեալ իրական պատկերը. Հռոմից վերադարձից եւ երկու որդիներին բանտում թողնելու գնով Աղուանքը խալիֆայութեանը ենթարկելուց յետոյ (694 թ.) Վարազ Տրդատն ապրել եւ իշխել է մի քանի տարի ու վախճանուել հաւանաբար հակաբաբական 699-703 թթ. ապստամբութեան նախօրեակին կամ ամենասկզբում; իշխանութիւնն անցել է նրա կնոջը, որն սկզբում, ըստ երեւոյթին, որեւէ դիմադրութիւն չի առաջացրել; իր որդիներին Կոստանդնուպոլսի բանտից շուտափոյթ

© National Library of Armenia

ազատելու գաղափարով տոգորուած եւ նոր. սկսուած ապստամբութեան ոգուն ըստ ամենայնի չափազանց յարիր ձեւով, Ներսէս Բակուր կաթողիկոսի հետ միասին եւ թերեւս ոչ առանց բիւզանդացիների յամառ յորդորների, Սպրամ իշխանուհին 700 թ. փոխադրել է Աղուանից եկեղեցին կայսերական երկաբնակ հաւատքին, որն արդէն չէր կարող չառաջացնել ազգային միաբնակութիւնը ոչ պարզապէս իբրեւ քաղաքական կողմնորոշում ընդունող հոգեւոր շրջանակների ընդդիմութիւնը; 703–ին ապստամբները վճռել են հրաժարուել բիւզանդական կողմնորոշումից եւ վերստին հպատակութիւն յայտնել խալիֆայութեանը ոչ միայն կենտրոնական Հայաստանում, այլեւ Աղուանքում; սակայն այստեղ առաջ է եկել երկրի իշխանուհու անձնական խնդիրը՝ հրաժարուե՞լ բիւզանդական կողմնորոշումից դեռեւս որդիներին բանտից չազատած (դժուար է չնկատել, որ կայսրութիւնը «դանդաղկոտութիւն» է ցուցաբերել այդ, թւում է, թէ ոչ այնքան բարդ գործողութիւնը կատարելիս), թէ՞ շարունակել յուսալ արաբական ըստ ամենայնի գերակշռող ուժերի դէմ պայքարի ինչ–ինչ հնարաւորութիւնների գոյութեանը; եւ այս վերջին հիւծիչ երկմտանքն արդէն ճակատագրական է դարձել իր ամուսնու քաղաքական ճկունութիւնը չդրսեւորած իշխանուհի–մօր համար:

Ինչ վերաբերում է Սպրամին ի վերջոյ գահընկեց արած Շերոյի՝ Աղուանից իշխան դառնալու ժամանակին, ապա դա աւելի մեծ հաւանականութեամբ հնարաւոր է կապել 703 թ. արաբական հպատակութիւն յայտնելու պահի հետ, որն այդպէս էլ չընդունուեց տարաբախտ իշխանուհու կողմից (յիշենք Ներսէս Բակուրի անէծքը «վասն հակաճառութեանն ... ի վերայ իշխանութեանն»):

Ուշադիր քննութիւնը թերեւս հնարաւորութիւն է տալիս ենթադրել, որ արաբական հպատակութեանը վերադառնալու պատրաստակամութիւնը, արտայայտուած հայկական, թւում է, թէ աւելի շատ հոգեւորական շրջանակներում, միայն Սպրամ Աղուանից իշխանուհու մօտ չէ, որ ոչ միանշանակ է ընդունուել: Ուշագրաւ է Մովսէս Դասխուրանցու ժամանակագրական հաղորդումների մէջ սպրդած մի արտայայտութիւն, ուր Նախճաւանի ու Խրամի ողբերգութեան պատճառների բացատրութիւնը տրւում է հետեւեալ ձեւով. «Եւ այսորիկ պատճառ կորստեանն եղեւ ի նոսա այն, զի (bclr այսմ կորստեանն նոցա պատճառ եղեւ այն) առ հասարակ շնչեալ (bclr ի շնչել) ի նոսա հոգի մոլորութեան, զի արհամարհանաւք այպն առնէին զհայրապետս (bclr զհայրապետ) եւ զքահանայս, եւ (a չիք եւ) զկրաւնաւորս ձանձրացուցանէին» (Գ.ժզ, էջ 318):

Շերոյ իշխանը եւ նորընտիր Սիմէոն կաթողիկոսը (աթոռակալած 1,5 տարի՝ 704-705) փորձեցին հանգստացնել ու համախմբել նախորդող տարիներին երկպառակուած երկիրը եւ լուծել առաջացած տարաբնոյթ խնդիրները[43]: Առաւել ուշագրաւ է, որ արդէն Միքայէլ Շաքեցի կաթողիկոսի ընտրութիւնից յետոյ (մօտաւորապէս 705 թ. երկրորդ կէս) հրաւիրուած մի ժողովի արձանագրութեան մէջ Շերոյ իշխանը ստորագրում է նաեւ բիւզանդական տիտղոսով («ես՝ Շերոյ՝ ապեհի պատրիկ, Գարդմանից տէր, Աղուանից իշխան»), իսկ նրա մասնակիցների թւում Պարտաւի նախորդ ժողովից յայտնի եպիսկոպոսների կողքին յիշատակուած են ե՛ւ Ներսէս Բակուրի կողմից հալածուած, տարիներ առաջ Հոնաց լուսաւորիչը եղած «Իսրայել Մեծկուանից եպիսկոպոս»–ը, ե՛ւ «Զաքարիայ Մեծիւրեանց եպիսկոպոս»–ը, որը ձեռնադրուել էր Ներսէսի կողմից՝. նրան մատուցած վերը նշուած այպանելի ծառայութեան դիմաց[44]:

Բոլոր դէպքերում, արաբական հպատակութիւնը շուտով բերեց նոր հալածանքների, ողջակիզումների ու աքսորի, որոնք մանրամասն նկարագրուած են հայկական եւ օտարալեզու աղբիւրներում: Ժամանակով ամենից մօտ Ղեւոնդ պատմիչը արաբների քաղաքականութեան այդ փոփոխությունը կապում է Աբդ ալ–Մելիք ամիրապետի վախճանի (705 թ. կէսեր) եւ նրան փոխարինած որդու՝ Վլիթ–Վալիդի (705-715) իշխանութեան հետ[45]: Ըստ ՊԱ Գ.ժզ գլխի յաջորդ հաղորդման՝ «Յետ այսորիկ զՇերոյ Աղուանից իշխան (bcr իշխանն) ազատաւքն (bclr ազատովքն) հանդերձ տարան ի Տարաւն (bclr չիք ի Տարաւն) յԱսորիս, եւ Հայ թիւն ՃԾԴ[46] էր»:

Շերոյ իշխանի ճակատագրի մասին աղբիւրներում այլ տեղեկութիւններ չեն պահպանուել, եւ հնարաւոր չէ ճշտել՝ արդեո՞ք նա շատերի պէս նահատակուեց աքսորում, թէ՞ մի քանի հայ իշխանների նման կարողացաւ վերապրել ու հայրենիք վերադառնալ Աբդլ Ազիզ ոստիկանի իրագործած ներման տարիներին (706-709): Աղուանից յաջորդ իշխանի յիշատակութիւնն ունենք Շերոյի աքսորից միայն ինը տարի անց՝ 714 թուականի համար: Արաբական մի հերթական հիւսիսկովկասեան արշաւանքի մասին ՊԱ Գ.ժզ գլխի շարունակութեան մէջ ասւում է. «Եւ յետ երկուց ամաց ի թուականութեանն Հայոց ՃԿ [711] եկն Աբդլ Ազիզ իշխանն Տաճկաց յԱղուանս եւ նստաւ ի Պարտաւ: ... Եւ զկնի Գ ամաց [714] եկն Մսլիման, աւերեաց զԴարբանդ եւ եմուտ ի Խազիրս. ուստի ոչ զաւրեաց ելանել: Ապա թողու զբանակ կազմն ամենայն ընչիւք եւ զհարճս անգամ վերջապահս իւր առնէ, եւ զԵռանշահիկն զՎաչագան ի Պատրիկեան Աղուանից իշխան զքաջ կորովի աջողակ աղեղնաւորն հանդերձ զաւրաւքն իւրովք յետոյ իւր արարեալ. յորմէ զկնի եկեալ Խազիրքն՝ պարտեցան՝ դարձեալք ի փախուստ»[47]: Ընդունելի պէտք է համարել հայը Ներսէս Ակինեանի ենթադրութիւնը, որ այս Վաչագան Պատրիկեան իշխանի հայրը յիշատակուած է Պարտաւի 704 թ. ժողովում՝ որպէս «Պատրիկ ի Քարոյեան՝ յարքայիցն զարմից, որք ի նորին հրամանէ Վաչագանայ արքայի (bclr չիք արքայի) բնակեցան յԱզբեդ գաւառի» (Գ.ժ, էջ)[48]:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 **Ա. Ա. Акопян**, *О хронологии последних событий в "Истории 684 года"*, "Кавказ и Византия", вып. 6, Ереван, 1988, էջ 24-36:

2 **Փիլոն Տիրակացի**, *Ժամանակագրութիւն*, «Մատենագիրք Հայոց», հ. Դ-Ե, Է դար, Գ 414-415, էջ 969; *Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի վարդապետին Հայոց*, Սանկտ Պետերբուրգ, 1887, գլ. Դ, էջ 16:

3 «Ի ՃԼԴ թուականին տիրեցին հիւսիսային զաւրքն, որ են Խազիրք, եւ սպանին ի պատերազմին զիշխանն Հայոց եւ զՎրացն» (**Ստեփանոսի Տարօնացւոյ Ասողկան** *Պատմութիւն Տիեզերական*, աշխատութեամբ Ս. Տ. Մալխասեանց, Սանկտ Պետերբուրգ, 1885, Բ, 2, էջ 100):

4 ՊԱ հատուածները բերում ենք մեր քննական բնագրի ուղղումներով՝ նշելով կարեւոր գրչագրերի տարընթերցումները:

5 **Ա. Ա. Акопян**, *О хронологии последних событий*, էջ 29-31:

6 Ըստ Ասողիկի՝ «Ի ՃԼԵ թուականին Աշոտ Բագրատունի Հայոց իշխան եղեւ՝ ամս Գ» (**Ստեփանոսի Տարօնացւոյ Ասողկան** *Պատմութիւն*, Բ, 2, էջ 100): Ըստ Ղեւոնդի՝ «Աշոտոյ կալեալ զիշխանութիւնն ամս Դ» (*Պատմութիւն Ղեւոնդեայ*, գլ. Ե, էջ 17):

7 *Պատմութիւն Ղեւոնդեայ*, գլ. Ե, էջ 17: Սկզբնաղբիւրներից մէջբերումներում ընդգծումները մերն են:

8 Ըստ հրատարակիչներ Մկրտիչ Էմինի եւ Վարագ Առաքելեանի՝ վերականգնելի է սակը:

9 Այդ սկզբնաղբիւրի մասին մանրամասն տե՛ս **Ա. Ա. Акопян**, *Албания-Алуанк в греко-латинских*

© National Library of Armenia

и древнеармянских источниках, Ереван. 1987, էջ 212, 223-224; **Ա. Յակոբեան**, «*Վաչագանի վէպը» եւ Արշակունեաց թագաւորութեան խնդիրը Դ-Զ դարերի Աղուանքում*, «Հանդէս ամսօրեայ», ՃԺԷ տարի, Վիեննա, 2003, էջ 98-99:

10 Ըստ մեր վերջին քննութեան՝ գրուել է Հայոց թուականութեան ՃԼ եւ հոռոմէական ՆԼԴ, այսինքն՝ 681 թուականին: Տե՛ս «Մատենագիրք Հայոց», հ. Դ-Ե, Է դար, էջ 973, 1129, ծան. 45:

11 **Յովհան Մամիկոնեան**, *Պատմութիւն Տարօնոյ*, «Մատենագիրք Հայոց», հ. Դ-Ե, Է դար, ԺԱ, 40, էջ 1124:

12 Մանրամասն տե՛ս **Խ. Վրդ. Դաղեան**, *Նիւթեր Աղուանից պատմութեան ուսումնասիրութեան համար*, «Արարատ», 1897, էջ 135-139; **Ա. Ա. Акопян**, *Албания-Алуанк*, էջ 216-223:

13 *Պատմութիւն Ղեւոնդեայ*, գլ. Ե, էջ 18:

14 «Իսկ Յուստինիանոս ի յերրորդ ամի թագաւորութեան իւրոյ զաւր սաստիկ առաքեաց ի Հայս. եւ հրով եւ գերութեամբ քանդեցին գաւառս ԻԵ եւ ԸՌ երդ գերեալ վաճառեցին. եւ միւս ամին այլ զաւր առաքեաց՝ ԽՌ» (**Ստեփանոսի Տարօնացւոյ Ասողկան** *Պատմութիւն*, Բ, 2, էջ 100)

15 Թէոփանէսի երկի հայերէն թարգմանիչ Հրաչ Բարթիկեանը Βουκανι՛αν անուան տակ ենթադրում է Վրկանից աշխարհը (Օտար աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին, 13, Բիւզանդական աղբիւրներ, Դ, **Թէոփանէս Խոստովանող**, *Ժամանակագրութիւն*, թարգմանութիւն բնագրից, առաջաբան եւ ծանօթագրութիւններ Հ. Բարթիկեանի, Երեւան 1983, էջ 75, ծան. 426): Սակայն մեզ աւելի հաւանական է թւում նրա փոխարէն բնագրում ենթադրել Μουκανι՛αν երկրանուան եղած լինելը (**K. B. Тревер**, *Очерки по истории и культуре Кавказской Албании*, М. -Л., 1959, էջ 250) եւ վերջինիս տակ հասկանալ Բուն Աղուանքի արեւելեան ծովափնեայ հատուածի (վաղ միջնադարի տարալեզու աղբիւրներում կոչուած Բաղասական, Մասքթաց աշխարհ, Մախելոնիա, Զողա եւ այլն) մի անուանաձեւը, որը վրացական պատմական աւանդոյթին անցել է Մովական տարբերակով:

16 Հրաչ Բարթիկեանի ճշգրտմամբ՝ խօսքը Անտիոք քաղաքի մասին է (**Թէոփանէս Խոստովանող**, *Ժամանակագրութիւն*, Α. Μ. 6178, էջ 75, ծան. 428, էջ 263):

17 **Ստեփանոսի Տարօնացւոյ Ասողկան** *Պատմութիւն*, Բ, 2, էջ 100; *Պատմութիւն Ղեւոնդեայ*, գլ. Ե, էջ 18:

18 Ասողիկի պահպանուած ձեռագրերում՝ *կողմ մի* փոխանակ *կողմն Առաջին*. վերականգնումը՝ դեռեւս հայր Ներսէս Ակինեանի (**Հ. Ներսէս Ակինեան**, *Մովսէս Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի) եւ Պատմութիւն Աղուանից*, Վիեննա, 1970, էջ 360-361):

19 **Ստեփանոսի Տարօնացւոյ Ասողկան** *Պատմութիւն*, Բ, 2, էջ 100:

20 **Թէոփանէս Խոստովանող**. *Ժամանակագրութիւն*, Α. Μ. 6179, էջ 75:

21 *Թողեալ* կամ *թողոյր* բառը պէտք է վերականգնել, որպէսզի բնագրի միտքը աւարտուն դառնայ:

22 **Ստեփանոսի Տարօնացւոյ Ասողկան** *Պատմութիւն*, Բ, 2, էջ 101:

23 689 թ. պայմանագրի հիմնական կէտով բիւզանդացիները Հիւսիսային Ասորիքում ձեւաւորուած սահմանի մերձակայ մարզերից կայսրութեան խորքերը տեղափոխեցին քրիստոնեայ մարդայիտներին, որոնց ոչ մի կերպ չէին կարողանում խաղաղեցնել արաբները (**Թէոփանէս Խոստովանող**, *Ժամանակագրութիւն*, Α. Μ. 6184-6185, էջ 78-79; *История Византии*, т. 2, Москва, 1967, էջ 42:

24 **Թէոփանէս Խոստովանող**, *Ժամանակագրութիւն*, Α. Μ. 6184-6185, էջ 78:

25 Թուականը թերեւս վերականգնելի է ՃԽԲ (=693/694 թ.)՝ ենթադրելով հետագայ որեւէ գրչի արտագրութեան ժամանակ ինքնագրում եղած վերջին Բ տառի կորուստը յաջորդող «թուականին» բառի առաջին Թ տառին նմանեցնելու արդիւնքում:

26 Անկասկած ուղղելի է վերջին թուանշանը (թերեւս՝ ԼԳ, փոխանակ Ի), քանի որ Սմբատ իշխանը յիշատակւում է մինչեւ Ը դարի 20-ական թթ. կէսերը տեղի ունեցած բազմաթիւ դէպքերի առիթով: ՊԱ Գ.ժզ գլխում (**Մովսէս Կաղանկատուացի**, *Պատմութիւն Աղուանից աշխարհի*, քննական բնագիրը եւ ներածութիւնը Վ. Առաքելեանի, Երեւան, 1983, էջ 320) ճշգրիտ նշւում է նրա մահուան թուականը. «եւ նոյն ամի մեռաւ Սմբատ՝ Հայոց իշխան. եւ եղեւ տարին սով խիստ, որ էր թիւ Հայոց ՃՀԵ [726 թ.]»: Ըստ այսմ, Սմբատի 20 տարին («ամս Ի») թերեւս համապատասխանում է Տայքից նրա վերադարձից (որը տեղի է ունեցել 706-709 թթ. պաշտօնավարած Աբդլ Ազիզ ոստիկանի կոչով) մինչեւ մահն ընկած ժամանակին:

27 *Պատմութիւն Ղեւոնդեայ*, գլ. Զ, էջ 19: Յաջորդ գլուխներում պատմիչն արդէն շարադրում է արաբների դէմ Հայոց 699-703 թթ. ապստամբութեան դրուագները (գլ. Է-Ը, էջ 29-35):

28 **Α. Тер-Гевондян**, *Армения и Арабский халифат, Ереван* 1977, էջ 72; *Հայ ժողովրդի պատմութիւն*, հ. Բ, Երեւան, 1984, էջ 325:

29 **Թէոփանէս Խոստովանող**, *Ժամանակագրութիւն*, Α. Μ. 6186-6190, էջ 79-82:

30 ՊԱ, Գ.ժբ, էջ 312-313: Միքայէլը Աղուանից կաթողիկոսն էր 37 տարի՝ 705 թ. աշնանից մինչեւ՝

742 թ. (**Α. Α. Акопян**, *Албания-Алуанк*, էջ 277): Աղբիւրագիտական տեսանկիւնից կարեւոր է նաեւ այս հաղորդման շարունակութիւնը. «եւ կանգնեցին նշան տէրունական. յորում կայ գիր այսպէս. «Քրիստոս Աստուա՛ծ, յիշեա՛ զկամաւոր չարչարանս քո ի վերայ սորա. զոր վասն մերոյ փրկութեան, եւ ընկա՛լ զնշանս զայս. զոր ետուր երկիւղածաց քոց, եւ ներեա՛ յանցանաց իմոց՝ Միքայէլի՝ Աղուանից կաթողիկոսի: Եւ ողորմեա՛ Աղուանից (ա չիք Աղուանից) աշխարհիս՝ փրկելով յամենայն փորձութեանց, զի յաւուր գալստեան քո արժանի լիցուք կալ ընդ աջմէ քումմէ: Եւս աղաչեմ վասն Գագկայ ծառայի քոյ եւ քեռ սորա Մարիամայ, եւ Վարազոյի ոսկերչի մեծի (bclr *չիք* եւ Վարազոյի ... մեծի)»»: Ենթադրելի է, որ վերը ներկայացուած «Աղուանից կաթողիկոսների գաւազանագիրք» կամ «կաթողիկոսարանի տոհմամատեան - քոթուկ» համարուող հաւաքածոյի մէջ արձանագրուած են եղել նաեւ Հայոց Արեւելից եկեղեցիներում պահուող սրբութիւններին կցուած գրառումները: Հմմտ. նաեւ ՊԱ վերջին գլխում Եղիազար կաթողիկոսի (680-686) մասին պահպանուած տեղեկութիւնը. «Սա եգիտ զսուրբ խաչն՝ ծածկեալն ի Մեսրոպայ ի Գիս գեաւղ, եւ ի նոյն կենարարդ փայտէն մասն առեալ՝ եդ ի ՃԻ դահեկանի ոսկւոջ եւ գրեաց. «Եղիազարի է»» (Գ.իգ, էջ 344):

31 **Թէոփանէս Խոստովանող**, *Ժամանակագրութիւն*, Α. Μ. 6204, էջ 94:

32 Ըստ այսմ, ստացւում է՝ Հայոց ապստամբութեան ժամանակ:

33 **Հ. Ներսէս Ակինեան**, *Մովսէս Դասխուրանցի*, էջ 363-366: Երկու էջ անց հեղինակն անսպասելիօրէն կարծիք է յայտնում, որ Վարազ Տրդատը, կայսրութիւնից վերադառնալով, Աղուանք հասաւ Ծերոյ իշխանի՝ Ասորիք աքսորուելուց յետոյ, այսինքն՝ 706 թ. (ըստ նրա՝ 704):

34 **K. B. Тревер**, *Очерки по истории и культуре Кавказской Албании*, էջ 250; *Очерки истории СССР*, М., 1954, էջ 611; **C. Toumanoff**, *Studies in Christian Caucasian History*, Georgtown, 1963, էջ 216:

35 *История Византии*, т. 2, էջ 46:

36 Հմմտ., օրինակ, Ասողիկի մօտ Եղիա Արճիշեցի կաթողիկոսի աթոռակալման թուականը. «Իսկ զկնի Տեառն Սահակայ, ի ՃԾԸ թուականին յաջորդէ զաթոռն Եղիա ի գեղջէ Արճիշոյ...» (Ստեփանոսի Տարօնացւոյ Ասողկան Պատմութիւն, Բ, 2, էջ 102): Մանրամասն տե՛ս **Նորայր Ն. Բիւզանդացի**, *Նախնիք*, հրատարակութեան պատրաստեց Մարտիրոս Մինասեան, Ժնեւ, 1986, էջ 43:

37 Հմմտ. **Թէոփանէս Խոստովանող**, *Ժամանակագրութիւն*, Α. Μ. 6192, էջ 83:

38 *Պատմութիւն Ղեւոնդեայ*, գլ. Ը, էջ 21:

39 Թուականը թերեւս ուղղման կարիք ունի գոնէ երկու տարով:

40 Դուինում արաբ սպանուածների այս անհաւանական մեծ թիւը՝ «ԿԲ հազարս», թերեւս ուղղելի է «զԲ հազարս», որը նաեւ քերականօրէն աւելի ճիշտ ձեւ է. հմմտ. 3 բառ առաջ՝ «զՏաճիկն»:

41 ՊԱ, Գ.ժզ, էջ 318: Հմմտ. **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** *Պատմութիւն Հայոց*, Թիֆլիս, 1912, էջ 119: 699-703 թթ. ապստամբութեան մանրամասնութիւնները ըստ արաբական պատմիչների (Իբն ալ-Անիր, Խալիֆա իբն ալ-Խայեաթ, Քուֆի) տե՛ս Արամ Տէր-Ղեւոնդեանի մօտ (*Հայ ժողովրդի պատմութիւն*, հ. Բ, էջ 326-330):

42 *Պատմութիւն Ղեւոնդեայ*, գլ. Թ, էջ 22:

43 Ժողովի չորս փաստաթղթերից (ՊԱ, Գ, գլ. Ը-ԺԱ) երկուսը («Ձեռնարկ, զոր խնդրեաց Եղիա Հայոց կաթողիկոս ի ժողովոյն Աղուանից՝ վասն միաբանութեան եւ ուխտի հաստատութեան Հայոց եւ Աղուանից», «Գիր պայմանի (bclr պատասխանոյ) տեառն Եղիայի՝ Հայոց կաթողիկոսի առ Աղուանս») պահպանել են նրա թուագրութիւնը՝ «ՁԵ-երորդ ամին Տաճկաց եւ ի Հայ թուականիս ՃԾԲ, յամսեանն Հրոտից» (ՊԱ, Գ.ը, էջ 302; **Ա. Յ. Յակոբեան**, *Եղիա Արճիշեցի կաթողիկոսի նորայայտ թուղթը*, «Պատմա-բանասիրական հանդէս», Երեւան, 1981, թիւ 4, էջ 151. այստեղ հրատարակուած է ՊԱ Գ.թ գլխում Մովսէս Դասխուրանցու կողմից համաոստուած ձեռնարկի՝ Էջմիածնական Գիրք Թղթոցի երկու գրչագրերում պահպանուած ամբողջական բնագիրը, որտեղ ճիշտ է տրուած նաեւ Հայոց թուականը՝ ՃԾԲ փոխանակ Մովսէս Դասխուրանցու արտագրած ՃԽԸ-ի): Հիշրի 85 թուականը համապատասխանում է 704 յունուար - 705 յունուար ժամանակահատուածին, իսկ Հայոց 152 թ. (703 յունիսի 4 - 704 յունիսի 3) Հրոտից ամիսը՝ 704 թ. ապրիլի 30-ից մայիսի 29-ը ընկած երեսնօրեակին: Ժամանակագրական աղիւսակներն օգտագործել ենք ըստ **V. Grumel**, *La chronologie*, Paris, 1958; **В. В. Цибульский**, *Современные календари стран Ближнего и Среднего Востока*, Москва, 1964; **Բ. Ե. Թումանեան**, *Հայ աստղագիտութեան պատմութիւն*, Երեւան, 1970 եւ **Հ. Ս. Բաղալեան**, *Օրացոյցի պատմութիւն*, Երեւան, 1970:

44 Տե՛ս, օրինակ, Սիմէոնի կանոններում (ՊԱ, Գ.-ժա) Փուսան Վեհ իշխանի դրուագը:

45 Ամենայն հաւանականութեամբ 706 թ. սկզբներին ընդունուած այդ փաստաթուղթը պահմանուել է Էջմիածնական Գիրք Թղթոցի գրչագրերից երկուսում (ՄՄ, թիւ 2966, էջ 120ա-բ. 3062, էջ 200ա) եւ հրատարակուել Արսէն Տէր-Միքելեանի կողմից Սամուէլ Անեցու ժամանակա-

© National Library of Armenia

գրութեան (Վաղարշապատ, 1893) յաւելուածում (էջ 286): Նրա թուագրումն է «Հայոց ՁԸ թուին», որն ուղղելի է «Տաճկաց ՁԷ թուին» (706 յունուար - 707 յունուար):

46 *Պատմութիւն Ղեւոնդեայ*, գլ. Ժ, էջ 23: Պատմիչը նաեւ մանրամասն գրում է Նախճաւանի ու Խրամի ողբերգութեանը նախորդած՝ բիւզանդացիների եւ Վարդանակերտի յաղթանակից յետոյ Տայքի Թուխարք գաւառում բնաւորուած Սմբատ կիւրոպաղատի զօրքերի՝ Հայաստանը վերագրաւելու փորձի եւ ջախջախիչ պարտութեան մասին Վանանդի Դրաշպետ գիւղի մօտ, որից յետոյ Սմբատն իր հետ եղած իշխաններով հեռացաւ Եգերաց աշխարհի Փոյթ քաղաքը, ուր մնաց վեց տարի (էջ 37-40): Ըստ Արամ Տէր-Ղեւոնդեանի՝ վերջին պարտութեան մասին գրում է նաեւ Ժ դարի արաբ պատմիչ Քուֆին, իսկ Նախճաւանի ու Խրամի դէպքերը յիշատակում է նաեւ Խալիֆա իբն ալ- Խայեաթը՝ թուագրելով, սակայն, Հիջրի 84 թուականով (703 թ.): Տե՛ս *Հայ ժողովրդի պատմութիւն*, հ. Բ, էջ 329:

47 Էջ 318-319: ՊԱ բոլոր ձեռագրերում այս թիւը ՃԾԳ է, սակայն ճիշտ ենք համարում Գ-Դ ամենատարածուած տառաշփոթութեան ենթադրութեամբ վերականգնում տալ՝ «ՃԾԴ» (705 յունիսի 3 - 706 յունիսի 2), որն իր հաստատումն է գտնում բնագրի շարունակութեան մէջ. «Եւ ի միւսում ամի [=706/707] զՇիրակայ տէրն տարան յԱսորիս: Եւ յետ երկուց ամաց [=708/709] անց Մրուան Տաճկաց իշխանն ի Գելան (cr gԱլան, b Լան, l յԱղան) եւ ոչ կարաց մտանել: Եւ ել Խազրաց տէրն ութսուն հազար արամբք եւ առ (al էառ) զԱղուանս. եւ ՃԾԸ էր թիւն (bclr ի ՃԾԸ թուականին) [=709/710]»:

48 Էջ 319-320: Համեմատական հրատարակութեան մէջ այս հատուածը իր շարունակութեան հետ միասին դարձուած է առանձին գլուխ (ԺԷ), որը յանգում է մեզ հասած a գրչագրից (ՄՄ, թիւ 1531) ընդօրինակուած մի ձեռագրախմբի (Աց), ուստի չի կարող ընդունելի համարուել:

49 Հ. Ներսէս Ակինեան, *Մովսէս Դասխուրանցի*, էջ 378:

ՏԱՇԻՐ-ՁՈՐԱԳԵՏԻ ԿԻՒՐԻԿԵԱՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՃԳՆԱԺԱՄՆ ՈՒ ԱՆԿՈՒՄԸ

Արտաշէս Շահնազարեան

Աւատատիրական յարաբերութիւնների խորացման հետեւանքով Բագրատունեաց հայոց թագաւորութիւնը յատկապէս Ժ դ. երկրորդ կէսին քաղաքականապէս մասնատուեց, եւ առաջացան ծայրամասային մի շարք մանր թագաւորութիւններ: Դրանցից էր 960-970-ական թթ.[1] Սմբատ Բ-ի եղբայր Գուրգէնի (տեղական արտասանութեամբ՝ Կիւրիկէ) հիմնած Տաշիր-Զորագետի Կիւրիկեան թագաւորութիւնը՝ Շամշուլդէ կենտրոնով: Գուրգէնի որդի Դաւիթ Անհողինի օրօք (991-1050) իր հզօրութեան գագաթնակէտին հասած այս թագաւորութիւնը ներառում էր նաեւ Տաւուշ, Գարդման ու Փառիսոս գաւառները: Դաւիթ Անհողինի որդի Կիւրիկէ Ա-ի իշխանութեան երկրորդ շրջանում Տաշիր-Զորագետի Կիւրիկեան թագաւորութիւնը սկսեց ճգնաժամ ապրելով աստիճանաբար թուլանալ՝ բռնելով անկման ուղին: Դրա պատճառները հիմնականում արտաքին էին՝ պայմանաւորուած սելջուկեան եւ վրացական գործօններով:

Զնայած սելջուկեան սուլթան Ալփասլանի (1063-1072) գլխաւորած 1064թ. արշաւանքի ժամանակ Կիւրիկէ Ա-ը, հնազանդութիւն յայտնելով եւ դստերը ճարահատեալ նրա մեծ վեզիր Նիզամ ալ-Մուլքին կնութեան տալով, իր թագաւորութիւնը փրկեց աւերումից ու կործանումից, սակայն կորցրեց Շամշուլդէն իր շրջակայքով: Բանն այն է, որ Ալփասլանի պահանջով Վրաց թագաւոր Բագրատ Դ-ը (1027-1072), խորամանկութեամբ Կիւրիկէ Ա-ին ձերբակալել տալով, ստիպեց ոչ միայն դստերը կնութեան տալ Նիզամ ալ-Մուլքին, այլեւ իրեն զիջել Շամշուլդէն, ինչպէս նաեւ Ուփիրեթ, Քոբայր եւ Վարազաքար բերդերը[2]: Շատ չանցած Բագարատ Դ-ն այդ երեք բերդերը վերադարձրեց Կիւրիկէ Ա-ին, սակայն ռազմավարական խիստ կարեւոր նշանակութիւն ունեցող Շամշուլդէն պահեց իրեն[3]: Ենթադրելի է, որ նա վերոյիշեալ բերդերը հետ տուեց սելջուկների ճնշման տակ: Ինչ վերաբերում է Շամշուլդէին, ապա Կիւրիկէն ստիպուած էր հաշտուել դրա կորստեան հետ եւ իր թագաւորութեան կենտրոնը դարձնել Շամշուլդէից հարաւ գտնուող Լոռէ բերդաքաղաքը: Ըստ Սամուէլ Անեցու՝ դա տեղի ունեցաւ 1065 թ.[4]: Սակայն Տաշիր-Զորագետի Կիւրիկեան թագաւորութեան տարածքային կորուստները դրանով չսահմանափակուեցին: Վրացական աղբիւրների հաղորդումների համաձայն՝ նախքան 1069 թ. Գանձակի Շադադեանները Կիւրիկէ Ա-ից խլել էին Գագ եւ Գաւարզին (Քաւազին) բերդերը, որոնք Բագարատ Դ-ից պարտուելուց յետոյ զիջեցին նրան[5]: Զնայած Կիւրիկէ Ա-ը աշխատում էր չփչացնել յարաբերութիւնները Բագարատ Դ-ի հետ, ստիպուած էր մասնակցել վերջինիս դէմ 1068 թ. Ալփասլանի ձեռնարկած արշաւանքին, որի հետեւանքով Վրաց թագաւորը ստիպուած էր ընդունել սելջուկեան գերիշխանութիւնը[6]:

Երբ Ալփասլանի յաջորդ Մելիք-շահը (1072-1092) Գանձակի Շադադեան ամիրայութիւնը 1087 թ. վերացրեց, եւ այն-

© National Library of Armenia